


ԵՐԿՆՈՒՈՐՏ, կամայական շառավղով երե-
վակայական օժանդակ ոլորտ, որի վրա
պրոյեկտվում են երկնային լուսատուները.
օգտագործվում է աստղաչափական խըն-
դիրները լուծելիս: Ե-ի մասին պատկերա-
ցումներն առաջացել են դեռևս հնում.
հիմքում ընկած է գմբեթաձև երկնակամա-
րի գոյության տեսողական՝ պատկերա-
ցումը: Այդ պատկերացումը կապված է
այն բանի հետ, որ երկնային լուսատունե-
րի հսկայական հեռավորությունների
պատճառով մարդու աչքն ի վիճակի չէ
տարբերել այդ հեռավորությունները: Երկ-
րաչափական առնչությունների պարզեց-
ման համար Ե-ի շառավղը, սովորաբար,
ընդունում են հավասար միավորի: Կախ-
ված դիտարկվող խնդրի բնույթից՝ որպես
Ե-ի կենտրոն ընտրում են Երկրի, Արեգա-
կի, մոլորակների կենտրոնները կամ այն
կետը, որտեղ գտնվում է դիտորդը: Ե-ի
վրա լուսատուների փոխադարձ դիրքն ու
տեսանելի շարժումներն ուսումնասիրելու
համար ընտրում են կոորդինատների որևէ
համակարգ (տես *Երկնային կոորդինատ-
ների համակարգեր*):

Պատկերված Ե. (նկ.) համապատասխա-
նում է դիտորդի՝ Երկրի մակերևույթի
φ լայնության վրա գտնվելուն: Այս ոլորտի
կենտրոնով անցնող ուղղաձիգը Ե. հա-
տում է Z և I կետերում, որոնք կոչ-
վում են համապատասխանաբար՝ α և β թ
(դիտորդի գլխավերևում) և նա դիր:
Ե-ի կենտրոնով անցնող և ուղղաձիգ

ուղղությանն ուղղահայաց հարթությու-
նը ոլորտը հատում է NESW մեծ շրջանա-
գծով, որը կոչվում է մաթեմատիկական
կամ իրական հ ո թ ի գ ո ն: Մաթեմա-
տիկական հորիզոնը Ե. բաժանում է տե-
սանելի և անտեսանելի կիսոլորտների.



Երկնային

առաջինում գտնվում է գեներթը, երկրոր-
դում՝ նադիրը: Ե-ի կենտրոնով անցնող
և Երկրի պտտման առանցքին զուգահեռ
ուղիղը կոչվում է ա շ խ ա թ հ ի ա
ռ ա ն ց ք, իսկ այդ ուղղի և Ե-ի հատ-
ման կետերը՝ ա շ խ ա թ հ ի ա
յ ի ն (P) և Տ ա թ ա Վ ա յ ի ն (P')
բ և ե ո ն ե թ: Աշխարհի առանցքին ուղղա-
հայաց և Ե-ի կենտրոնով անցնող հար-
թությունը ոլորտը հատում է AWA'E մեծ
շրջանագծով, որը կոչվում է ե թ կ ն ա
յ ի ն հ ա ս ա թ ա կ ա ծ: Երկնային
հասարակածին զուգահեռ Ե-ի փոքր շրջա-
նագծերը կոչվում են ե թ կ ն ա յ ի ն
գ ու գ ա հ ե ո ա կ ա ն ն ե թ: Աշխարհի

առանցքի և մաթեմատիկական հորիզոնի
հարթության, ինչպես նաև ուղղաձիգ
ուղղության և երկնային հասարակածի
հարթության միջև եղած անկյունները հա-
վասար են դիտման վայրի φ ա շ խ ա թ ա
գ թ ա կ ա ն լայնությանը: Աշխարհի բևեռնե-
րով, գեներթով և նադիրով անցնող՝ Ե-ի
մեծ շրջանագիծը կոչվում է ե թ կ ն ա յ ի ն
մ ի ջ օ թ ա կ ա ն: Երկնային միջօրեա-
կանի և մաթեմատիկական հորիզոնի հատ-
ման երկու կետերից մեկը կոչվում է հ յ ու
ս ի ս ի կ ե տ (N), իսկ մյուսը՝ հ ա թ ա
վ ի կ ե տ (S): Այդ կետերը միացնող
NS ուղիղը կոչվում է մ ի ջ օ թ ի գ ի ծ:
Մաթեմատիկական հորիզոնի և երկնային
հասարակածի հատման երկու կետերից
մեկը կոչվում է ա թ և մ ու տ ք ի կ ե տ
(W): Ե-ի մեծ շրջանագիծը, որով կատար-
վում է Արեգակի տեսանելի տարեկան
շարժումը, կոչվում է խ ա Վ ա թ ի թ:
Խավարածրի և երկնային հասարակածի
հարթությունները կազմում են ε=23°27'
անկյուն: Խավարածրը հասարակածը հա-
տում է երկու կետում, որոնցից մեկը
գ ա թ ն ա ն ա յ ի ն, իսկ մյուսը ա շ
ն ա ն ա յ ի ն գ ի շ ե թ ա հ ա Վ ա ս ա
թ ի կ ե տն է: Գիշերահավասարի կետերից
90°-ով թեքված կետերը կոչվում են ա մ ա
ռ ա յ ի ն և ձ մ ե ո ա յ ի ն ա թ և ա
դ ա թ ձ ի կ ե տ ե թ (առաջինը գտնվում
է Ե-ի Տյուսիսային, իսկ երկրորդը՝ Տա-
րավային կիսագնդում):